ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անկախությունից ի վեր Վրաստանի հետ բարիդրացիական և գործընկերային հարաբերությունների զարգացումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր երկու երկրների միջև ստորագրվել է շուրջ 80 միջազգային համաձայնագիր:

Ներկայումս ՀՀ կառավարության արտաքին քաղաքական ծրագրային կետերից է Վրաստանի հետ առանձնահատուկ հարաբերությունների զարգացումը: Պարբերական բնույթ են կրում բարձր մակարդակի քաղաքական հանդիպումները, քայլեր են ձեռնարկվում Վրաստանի հետ առևտրատնտեսական, գիտակրթական, մշակութային և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում երկկողմ հարաբերությունների զարգացման համար:

Վրաստանը Հայաստանի Հանրապետության համար հանդիսանում է կարևորագույն տարանցիկ երկիր: Վրաստանով են անցնում Հայաստանի Հանրապետություն ներկրվող և այստեղից արտահանվող բոլոր բեռների շուրջ երկու-երրորդը: «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Վրաստանի ֆինանսների նախարարության միջև տրանսպորտային միջոցների և ապրանքների միջազգային տեղափոխման վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) նպատակ ունի ամրապնդելու Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև առևտրային հարաբերությունները՝ կարևորելով երկու պետությունների սահմանների հատման ընթացքում տրանսպորտային միջոցների և ապրանքների արդյունավետ վերահսկողության կարևորությունը:

Արձանագրությամբ Կողմերն իրենց աշխատակազմերում նշանակում են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու կլինեն մի շարք գործառույթների իրականացման համար և այդ գործառույթների իրականացման նպատակով Արձանագրության հետ միաժամանակ ստորագրվել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Վրաստանի ֆինանսների նախարարության միջև «Նախնական էլեկտրոնային տվյալների

փոխանակման համակարգի» վերաբերյալ տեխնիկական դրույթների փաստաթուղթ:

Արձանագրության վավերացումը/հաստատումը, այնուհետև ուժի մեջ մտնելը թույլ կտա երկու երկրների պատկան մարմիններին նախապես ստանալ և մշակել տեղափոխվող ապրանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Ելնելով վերոգրյալից՝ 2019թ. նոյեմբերի 18-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Վրաստանի ֆինանսների նախարարության միջև տրանսպորտային միջոցների և ապրանքների միջազգային տեղափոխման վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման մասին» արձանագրության վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

?????? ????????
Dec 6 2019 3:59 PM

ՀՀ արտաքին գործերի
նախարարի տեղակալ **Շավարշ Քոչարյան**